ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 28 >> սեպտեմբերի 2018թ. N 480-Լ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1" Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ոչ ֆինանսական ոլորտի մեթոդաբանության բաժնի կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2" Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«28» սեպտեմբերի 2018թ.
N 480-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ոչ ֆինանսական ոլորտի մեթոդաբանության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Բաժինն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Բաժնի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի հիմնական խնդիրներն են՝ իր իրավասությունների շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, խաղային գործի բնաավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակումը և կատարելագործումը, խաղային բնագավառում փողերի լվացման դեմ պայքարի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակումը և կատարելագործումը, փողերի լվացման դեմ պայքարի գործում համագործակցությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և այլ մարմինների հետ, միջազգային և Եվրոպական Միության

անդամ երկրներում խաղային բնագավառում գործող համաձայնագրերին և ասոցիացիաներին անդամակցությանն ուղղված աշխատանքների իրականացումը, Նախարարությանը վերապահված ոլորտներում լիցենզավորման գործընթացի քաղաքականության մշակման և կատարելագործման աշխատանքների իրականացումը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի գործառույթներն են՝

1) վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակումը և կատարելագործումը վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակումը և կատարելագործումը.

2) շահումով խաղերի և խաղատների բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակումը և կատարելագործումը.

3) միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող վիճակախաղերի, շահումով խաղերի ուսումնասիրություն և դրանց կարգավորման անհրաժեշտ օրենսդրական դաշտի մշակումը.

4) այլ երկրներում այս բնագավառը կարգավորող պետական մարմինների հետ համագործակցությունը.

5) միջազգային և ԵՄ անդամ երկրներում խաղային բնագավառում գործող համաձայնագրերին և ասոցիացիաներին անդամակցությանն ուղղված աշխատանքների իրականացումը.

6) խաղային բնագավառում փողերի լվացման դեմ պայքարի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման աշխատանքների, փողերի լվացման դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրություն և նոր տեխնոլոգիաների ներդրման աշխատանքների, փողերի լվացման դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության ընդլայնմանն և կատարելագործմանն ուղղված աշխատանքների իրականացումը.

7) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը վերապահված ոլորտներում լիցենզավորման գործընթացի և ծանուցման ենթակա

գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունների քաղաքականության մշակման և կատարելագործման աշխատանքների իրականացումը.

8) Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, եզրակացությունների, ինչպես նաև մեթոդական պարզաբանումների տրամադրման աշխատանքների իրականացումը.

9) գործադիր իշխանության հանրապետական մարմինների կողմից մշակված իրավական ակտերի ուսումնասիրությունը և մասնագիտական դիրքորոշման ներկայացումը.

10) Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը և տեղեկատվության ազատության ապահովումը.

11) Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

12) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը, նրա բացակայության դեպքում՝ գլխավոր մասնագետը, իսկ վերջինիս բացակայության դեպքում առաջատար մասնագետը:

7. Բաժնի պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Բաժնի գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Բաժնի պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Բաժնի պետը:

11. Բաժնի յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը

սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):